Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

3К26(003)
О-95

Ս. ՈՐԺՈՆԻԿԻԶԵ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԻԼՅԻՉԸ ՀՈՒԼԻՍՅԱՆ ՈՐԵՐԻՆ

Թարգ. Գ.



ՅԵՐԵՎԱՆ
1924 թ.

A 4/6630

Պոլիգրաֆտրեստի Երևանի 2-րդ տպարան. Տիրաժ 5000 № 3908

ԻԼՅԻՉԸ ՀՈՒԼԻՍՅԱՆ ՕՐԵՐԻՆ

Կերենսկու — Տերեշչենկոյի — Չեռնովի — Ծերեթելու կոալիցյոն կառավարությանը վերջ դնելու համար լուրջ փորձ կատարվեց 1917 թ. յուլիս 3—4-ին։ Փորձը չհաջողվեց և մեր կուսակցության ու մեր առաջնորդների դեմ կատաղի հալածանք սկսվեց։ Ընկ. Լենինը գերմանական լրտես հայտարարվեց և, միաժամանակ, կառավարությունը հրաման արձակեց Լենինին ձերբակալելու մասին։

Յունկերներն ամեն տեղ հատատում էին— Լենինին էին փնտրում, բայց նա այլ ևս իր բնակարանում չէր։ Խոսում էին.—«փախել է Վիլհելմի մոտ», «գտիր՝ մի տեսնեմ ինչպե՞ս ես գտնելու»։

Տավրիկյան պալատում հենց միմիայն յերեկվա մասին են խոսում—մեր ցույցի՝ այն մասին, թե մեր կազմակերպության մեջ ամեն ինչ էլ բարեհաջող չէ։ Այսպես էին ասում ձախ էսէրները, այսպես էին ասում մինչև իսկ

բավական աչքի ընկնող մի քանի բոլշևիկներ։ Բանվորական շրջաններում բավականին շվարում է տիրել, բայց նա արագությամբ ցրվում է։ Գավրիլենցների ու Իզմայլովցիների շրջանում բավական պարզորոշ ձայներ եյին լսվում, թե. «խաբեցին, մենք չգիտեյինք, վոր բոլշևիկները գերմանական լրտեսներ են»։ Լենինին փնտրում եյին, բայց չեյին գտնում։ Մեր ընկերներից մի քանիսը հարց եյին դնում այն մասին, թե Լենինը չպետք է թագնվի, թե նա պետք է յերևան գա։ «Այլ կերպ կուսակցությունը հնարավորություն չի ունենա լայն մասսաների առաջ արդարանալու համար»։ «Կուսակցական առաջնորդին ծանր մեղադրանք է նետվում — նա պետք է հանդես գա դատարանի առաջ ու պետք է արդարացնի իրեն և կուսակցությունը»։ Այսպես եյին դատում նշանավոր բազմաթիվ բոլշևիկներ։

Ստալինի հետ միասին շտապում եյինք Լենինի մոտ։ Արդեն այստեղ եյին Զինովևը, Ն. Կ. Կրուպսկայան, Նոգինը և Վ. Յակովլևան։ Խոսակցություն սկսվեց, թե արդյոք Վլադիմիր Իլյիչը պետք է յերևան գա ու թույլ տա վոր իրեն բանտարկեն։ Նոգինը վեհերոտ կերպով պաշտպանում եր այն կարծիքը, թե պետք է հանդես գալ և հրապարակային դատարանի առաջ պայքարել։ Այսպես եր կարծում Մոսկվայի ընկերների նշանավոր մեծամասնությունը։ Վլադիմիր

Իլյիչը իրեն հատուկ պարզությամբ ապացուցեց, թե վոչ մի հրապարակային դատ էլ չի լինի։ Ստալինը վճռականորեն դեմ էր իշխանությանը ներկայանալուն։ «Յունկերները մինչև բանտ չեն հասցնի, ճանապարհին կսպանեն», — ասում էր նա։ Ամեն ինչից երևում էր, որ Իլյիչը նույնպես դեմ էր, միայն թե նրան մի փոքր շփոթեցնում էր Նոգինը։ Հենց այն ժամանակ ներս մտավ Յե. Ստասովան և հաղորդեց Տավրիկյան պալատում նոր տարածված լուրը՝ այն մասին, թե իբր, վոստիկանական դեպարտամենտի արխիվի փաստաթղթերի համաձայն՝ Լենինը պրովոկատոր է։ Այս խոսքերը Լենինի վրա անչափ ուժեղ տպավորություն գործեցին։ Զզվելի դող անցավ նրա դեմքով և նա, հակաճառություն չթույլատրող տոնով հայտարարեց, թե ինքը պետք է բանտ նստի։ Ինձ և Նոգինին ուղարկեցին Տավրիկյան պալատ, վորպեսզի Կենտգործկոմի նախագահության և Պետրոգրադի խորհրդի անդամ Անիսիմովի հետ բանակցենք Իլյիչին բանտում պահելու պայմանների մասին։ Մենք նրանցից յերաշխիք պիտի ստանայինք, վոր Իլյիչը չի պատառոտվի գազազած յունկերների կողմից։ Պետք էր աշխատել, վորպեսզի Իլյիչին բանտարկեն Պետրոպավլովսկայում (այնտեղ պահակազորը մերն էր) կամ թե, յեթե նա բանտարկվեր «Կրեստինում», այդ դեպքում բա-

ցարձակ յերաշխիք պիտի ստանայինք, վոր Իլյիչը չէր սպանվի և հրապարակային դատ պիտի նշանակվեր։ Անխախտելի համաձայնության դեպքում, յերեկոյան, Իլյիչին պիտի տանեյին բանտ, վորտեղ նրան կպահեյին, յեթե միայն այդ․․․ մեծ, վոճրագործ հիմարությունը կատարվեր։ Անխախտելի Պետրոպավլովկա տանելուն չէր համաձայնել։ Ինչ վերաբերվում եր «Կրեստերում» ապահով լինելու մասին յերաշխիք տալուն՝ հայտարարեց, վոր ի հարկե, միջոցներ ձեռք կառնըվեն։ Յես վճռականորեն պահանջեցի բացարձակ յերաշխիքներ (վոր ի հարկե, վոչ վոք չեր կարող տալ) և ավելացրի, թե վոր և է բանի դեպքում՝ նրանց բոլորին կկոտորեն։ Անխախտելին Դոնբասի բանվոր եր։ Ինձ թվաց, թե նա ես տրամադրված է լինում այդ գործի հաջողական պատասխանատվությունից։ Մի քանի բան ել, ու յես հայտարարեցի նրան. «Մենք Իլյիչին չենք տա ձեզ»։ Նորից ես համաձայնեց դրան։ Հետ եկինք շտապում և դուրս գալիս պատասխանեցինք բնկ. Լունաչարսկուն, վոր ինձ հանձնարարեց Լենինին հաղորդել, վորպեսզի Լենինը վոչ մի դեպքում բանտ չգնա, վորովհետև ամբողջ տանենում իշխանությունը միմիայն ձեռնարկներն է և գտնվում կոալիցիոն կառավարության ձեռքում, իսկ փաստորեն իշխանությունը կորնիլովցիներին է և վաղը, գուցե, ձեռնարկներն եւ նրանց ձեռքն անցնի։

Յես Իլյիչին և Ստալինին, վոր նրա մոտ եր գտնվում, հաղորդեցի Նարիմանովի հետ տեղի ունեցած խոսակցությունը, ընկ. Լունաչարսկու կարծիքը և ավելացրի, վոր Նարիմանովը չգիտե, թե վաղը հենց ինքը ում ձեռքին կլինի։ Վճռեցին, վոր այդ ես վոչ մի գրություն լինել չի կարող։ Իլյիչը ընկ. Զինովյեվի (Նախատարմիգի զինվորական կոմիսար) և Սեստրորեցկու մի բանվորի հետ միասին՝ բարեհաջող կերպով քաղաքից դուրս յեկավ։

Մի քանի որից հետո՝ Ստալինը ինձ առաջարկեց գնալ Լենինի մոտ, մի կողմից Լենինին տեղեկություններ հաղորդելու և մյուս կողմից՝ կարգադրություններ ստանալու։ Ինձ տվեց Սեստրորեցկուց մոտիկ բնակվող ընկ. Յեմելյանովի հասցեն և ծածկանշանը։ Մեծ զգուշությամբ յես հանձն առա այդ, վախենալով, վոր չլինի թե հետևից լրտես գա և Վլադիմիր Իլյիչի բնակատեղին իմացվի։ Յես կայարան գնացի գիշերով։ Մի փոքր փնտռելուց հետո՝ յես գտա մի տուն, վորի մեջ բնակվում եր ընկ. Յեմելյանովը։ Ինքը, ընկ. Յեմելյանովը տանը չեր և նրա կինը ինձ ուղեկցելու ուղարկեց իր 9—10 տարեկան տղային։ Մենք գնացինք դեպի լիճը, նավ նստեցինք, անցանք մյուս ափը և առաջ գնացինք թփուտների միջից։ Յես վճռեցի, վոր ընկ. Լենինը բնակվում է վոր և է ա-

մառանոցում։ Հանկարծ մենք կանգ առանք մի խոտհարքի մոտ, վորտեղ խոտի փոքրիկ դեզ էր դրված։ Տղան ինչ վոր մեկի անունը տվեց։ Դուրս յեկավ ինչ վոր մի մարդ։ Սա այդ տղայի հայրն էր։ Բարևեցի նրան։ Բացատրեցի, թե բանն ինչումն է և այլն։ Մտածում էյի, թե հետո՛ կտանի Լենինի մոտ։ Այդ ժամանակ ինձ մոտենում էր բեխ ու մորուքը սափրած մի մարդ։ Մոտեցավ ու բարևեց։ Յես պատասխանեցի պարզ ու չոր կերպով։ Այդ ժամանակ նա խփեց իմ ուսին և ասաց. «Ի՞նչ է, ընկեր Սերգո, չե՞ք ճանաչում»։ Զարմացա, վոր Լենինն էր։ Յես վոգևորությամբ սեղմեցի նրա ձեռքը. մոտեցավ նաև ընկ. Զինովյեվը, վոր մորուք և բեխեր էր թողել (դրանով նրա դեմքը շատ էր փոխվել)։ Սկսեցինք խոսակցությունները։ Մի քանի րոպե անց՝ Իլյիչը ինձ առաջարկեց իրենց հետ միասին ընթրել սև հացով և սելյոդկայով։ Նրանք ուրիշ վոչ մի ուտելիք չունեյին։

Այս «ընթրիքից» հետո՝ խոսակցությունը փոխադրեցինք Լենին — Զինովյեվի «հանգստի սենյակները»։ Այդպիսին հանդիսանում էր խոտի դեզը, վորի վրան եյինք յելել։ Թարմ խոտը հիանալի հոտ ուներ և տաք էր։ Յերկար ժամանակ յես նրանց պատմում էյի, թե իրենց բացակայության ժամանակ քաղաքում ինչ է կատարվում, ինչպիսի տրամադրություն է տի-

բում բանվորների ու գյուղացիների շրջանում, ինչ է կատարվում մեր կազմակերպության մեջ, Պետրոգրադի խորհրդում, մենշևիկյան կենտրոգործկոմում և այլն։ Վլադիմիր Իլյիչն ինձ լսելուց և մի շարք հարցեր տալուց հետո՝ ասաց.

«Մենշևիկյան խորհուրդները վարկաբեկվեցին իրենց. յերկու շաբաթ առաջ նրանք իշխանությունը կարող եյին գրավել առանց փոքրև ջանքի։ Այժմ նրանք այլևս իշխանության օրգաններ չեն։ Իշխանությունը նրանց ձեռքից խլված է։ Այժմ իշխանությունը կարելի չե գրավել միմիայն զինված ապստամբության միջոցով և ապստամբությունը յերկար չի սպասեցնի մեզ։ Ապստամբությունը տեղի կունենա սեպտեմբեր—հոկտեմբերից վոչ ուշ։ Մենք պետք է ծանրության կենտրոնը փոխադրենք գործարանային կոմիտեների վրա։ Գործարանային կոմիտեները պետք է դառնան ապստամբության օրգաններ»։

Այս ամենը յես լսում եյի լարված հետաքրքրությամբ. տպավորությունը շշմեցնող եր։ Հենց նոր եր, վոր մեզ ծեծ եյին տվել, իսկ նա նախագուշակում եր, վոր մեկ—յերկու ամիս հետո հաղթական ապստամբություն կունենանք։ Յերբ յես Իլյիչին հաղորդեցի մի ընկերոջ խոսքերը, թե ոգոստոս—սեպտեմբերից վոչ ուշ՝ Իշխանությունը կանցնի բոլշևիկներին և թե կա-

ռավարության նախագահ կլինի Լենինը,— նա, միանգամայն լուրջ կերպով պատասխանեց.«Այո, այդ այդպես կլինի»։ Ապա Իլյիչը մի շարք հրահանգներ տվեց, թե ինչպես պիտի անել աշխատանքը, թե հենց անմիջապես լեգալ Կենտկոմին կից՝ պիտի կազմել նույն Կենտկոմի անլեգալ բջիջը, լեգալ տպագրական օրգանին կից պիտի կազմել անլեգալ ապարատ, փորձեցի անլեգալ թռուցիկներով ասել այն, ինչ ասելու համար հնարավորություն չեն տա լեգալ մամուլում։

Խոսակցությունը ընդհատվել էր, վորովհետև հոգնածությունից յես անհանգիստ կերպով քնել էյի։ Առավոտը ժամը 6-ի փոխարեն՝ արթնացա 11-ին։ Մինչ այդ Վլադիմիր Իլյիչը պատրաստել էր մի շարք մանր հոդվածներ ու նամակներ Ստալինին և ուրիշ ընկերներին ուղարկելու համար։ Յես վերցրի այդ բոլորը, ցտեսություն ասացի ու հեռացա։ Շուտով յես մի անգամ ել գնացի Իլյիչի մոտ։ Յես նրան մոտ եյի տանում ընկ. Ծոտմանին, վոր հաջողեցրել եր Վլադիմիր Իլյիչին Ֆինլանդիա փոխադրելու գործը։ Այնուհետև այլ ևս Վլադիմիր Իլյիչին չը տեսա, մինչև հոկտեմբերի 24-ը, յերբ նա առաջին անգամ հրապարակ յեկավ Սմոլնիի հանդիսասրահում։ Յերբ յես դահլիճ մտա, Վլադիմիր Իլյիչը Պետրոգրադի խորհրդի նիստում

իր ճառը վերջացնում էր հետևյալ բացականչությամբ։

«Կեցցե՛, սոցիալական հեղափոխությունը»։

Դունկինը, բառացի կրկնելով, վառնում էր վաղկերությունից։

Ցերեկային թերթերում լույս տեսավ հաղորդագրություն, որ Լենինը փախցրել է Սմոլնի և աստվածաբանությունն ինքն է ղեկավարում։

Այո, լրագրավաճառները չախազվեցին։

Լենինը Հոկտեմբերյան աստվածաբանության կազմակերպումը իր յերկաթե ձեռքերի մեջ առավ և հասցրեց հաղթական վախճանի։

A 6690
ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0021530